ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Ararat und Masis . . 145
ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. Մ. — Աղշալոյս և Արեւելք լուսաւորութեան հայոց . . . . 150
ՋՐԱՔԵԱՆ Հ. Ք. — Ս. Գրոց ուսումն ի հայս . 156
ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս. — Հայ. բժշկարանք . 161
ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Մագնիսական քուն . . 163
Հանդէս մատենագրական. — Հ. Ս. ՍԱՐԵԱՆ. Քննադատական խնդիր. – Geistliches und weltliches aus dem türkisch-griechischen orient. – Ընդարձակ օրացոյց ազգային ճիւանդանոցի. – Recherches sur la syntaxe comparée de l'arménien. – Բառացուցակ պիտանուանց ֆրանսերէնէ ի հայ. – Դեռահասների ազատ ընթերցանութիւնը. – Դամոկլեան սուր. – Տաղեր ու խաղեր . . . . 173
Թ. Թ. — Գեղեցկագիտութիւն . . . 174
Ն. — Ժամանակակից Պատմութիւն . . 177
Ց. Ա. — Մկրտիչ Աճէմեան . . . 181
ՏԻԳՐԱՆ Գ. ԳԱՍՍԱՊԵԱՆ. — † Մատթէոս Մամուրեանի Մահը . . . . . 184
ԷՏՈՒԱՐ Տ'ԱՆԿԼԷՄՈՆ. — Որբերը. Թրգմն. Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ . . . . . 185
ՅՈՎՍԷՓ ՃԻԱԳՈՋԱ. — Ինչպէս Տերեւները. Թրգմ. Հ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՍԳԱՆՏԻԼԵԱՆ . 186
ՈՒԻԼԵԸՄ ԳԸԼԼԸՆ ՊՐԱՅԸՆԹ. — Հայեցողութիւն ի վերայ մահու. Թրգմ. ՓԱՌՆԱԿ Ս. ՍՕԹՆԵՂԲԱՅՐԵԱՆ . . . . . . 191
Նամականի . . . . . . 192

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ*

49. Թաւրիզէն կը գրեն թէ հետեւեալն է իրանի միապետ Մուզաֆֆէրէտտին Շահի այն ֆիրմանի թարգմանութիւնն, որ նորերս շնորհեց Պարսկաստանի Հայերին բարձր դպրոցներ բանալու համար. «Այն օրից, ինչ Քէյան փառահեղ թագաւորների գահը և իրանի կայսրութեան շահնշահութիւնը մեր օգոստափառ անձնաւորութեան վիճակվեց, իբրեւ երախտագիտութիւն առ Աստուածային նախախնամութիւնը, մենք տարածեցինք մեզ շնորհած ողորմութեան ճառագայթները մեր կայսրութեան բոլոր բնակիչների վրայ, ինչ ազգի և ցեղի ու կրօնի պատկանէին նրանք, և ամէնքին հայրենիքի որդիներ համարելով՝ ամէն առիթով և ամէն պարագայում նրանց բարօրութեան համար ոչինչ չխնայեցինք։ Յոյս ունենք, որ ամենակարող Աստուծու օգնութեամբ աւելի քան ցարդ վայելելով երկնային օժանդակութեան շնորհը՝ մեր այս սուրբ պարտականութեան մէջ աւելի աջողութիւն գտնենք։ Եւ արդ, մի բան, որ մեր սրտի բարի իղձերի հետ կատարելապէս համապատասխան է, այն է, որ մեր կայսրութեան Հայ ազգաբնակութիւնը, որ հին ժամանակներից ի վեր բնակած է առ ոտս Պարսից արքայական գահի, և որը մշտական հաւատարիմ հպատակութեան և հայրենասիրութեան ապացոյցներ է տուել, այժմ մտադիր է իր դըպրոցների թիւն աւելացնել և Թէհրանում, Դաւրէժում և Պարսկաստանի այլ գաւառներում հաստատել մի քանի կենտրօնական նշանաւոր դպրոցներ և այս առիթով մեր Օգոստափառ Վեհափառութիւնից արտօնութիւն է խնդրել այդ դպրոցների բացման համար։ Հայերի այդ նպատակը մեր սրտաբուղխ փափաքների հետ համաձայն գտնելով և նկատելով որ այդ նպատակը մեր հպատակների առաջադիմութեան պատճառ պիտի դառնայ կրթութեան, արհեստների և երկրագործութեան ասպարէզներում, և վաճառականութեան զարգացման մղիչ պիտի հանդիսանայ, սոյն հզօր արքայական ֆիրմանով շնորհում ենք նրանց արտօնութիւն՝ Պարսկաստանի Հայ դպրոցների բացման համար, և այդ դպրոցները մեր մասնաւոր հոգածութեան և պաշտպանութեան տակ առնելով՝ հրամայում ենք որ այն գումարները, որոնք այդ ձեռնարկութեան համար յատկացվելու են, գործադրըվեն նոյն գործի ձեռնարկողների և հոգաբարձուների մշակելիք կանոնադրութեան համեմատ որոշված ծախսերի համար։ Ընդհանրապէս բոլոր հաստատված դպրոցները մեր արքայական անձնաւորութեան պաշտպանութեան տակ դնելով, հրամայում ենք որ մեր բոլոր պաշտօնեաները ամէն տեսակ աջակցութիւն և օգնութիւն նուիրեն նոյն սուրբ գործի աջողութեան համար»։ — Տրված Րէճէբ ամսին 1318 թուին։

ԱՐՄԷՆԻԱ

50. Պրն. Գալֆաեան վերադարձած է Կովկաս և Բագուի թատրոնը ներկայացում մը տուած և շատ յաջող անցած է։ Կատարեր է Համլէթի դերն և անվերջ ծափահարութիւններով ողջունուեր է, այնպէս որ բուռն ծափահարութեան վերջը չբերուելով զինքը խրախուսեր են և վեց անգամ բեմ կոչեր են վարագոյրն իջնելէ վերջը. Կեցցէ Գալֆայեան աղաղակելով։ — Թէեւ դերասանական խումբի կողմէ ոմանք պատրաստութիւններ տեսեր են խանգարել տալու և սուլել տալու համար՝ Նախանձէ շարժեալ, բայց չեն յաջողեր։ Իմացածիս նայելով, այս բանին աւելի աշխատեր է Պր. Աբէլեան։ Բայց ընդհանրապէս, արտաքոյ կարգի բազմութեամբ լցուեր է և շատեր ետ դարձեր են տոմսակ չկարողանալով գտնել, որ կանուխէն լմնցեր էր։ Այժմ կ'գտնուի Պր. Գալֆայեան Տփղիս։ Կ'ըսուի թէ Արտիստական նոր թատրոնի մէջ պիտի ներկայացնէ եղեր Համլէտ։

ԲԻՒԶԱՆԴԻՈՆ

51. Նէշվիլէն կը գրեն – Առաջին անգամ ըլլալով Նէշվէլի մէջ լսարան մը վերջապէս բացուեցաւ։ Լսարանի առաջին ժողովը տեղի ու-

* Շար. տես Մարտ 1901։

digitised by A.R.A.R.@